կիր և Կիրակոս պատրիարքներու օրով ևս կարևոր նորոգութիւններ կատարուած են։ Իսկ 1795 ին ալ Ատանացի Յովհաննէս քհ. եկեղեցիին բոլոր պատերը գեղեցիկ յինիներով զարդարել տուած է, ըստ յիշատակարանի։

6. Ֆրանչիսկեանք կը հիւրընկալուին Ս. Հրեշտակապետի մէջ.

Սուլթան Սիւլէյման Բ.ի կ'ընծայուի Երուսաղէմի արդի պարըսպին վերաշինութիւնը, և կ'աւանդուի թէ պարսպէն դուրս թողուած են Սիոնի եկեղեցին, Փրկչի մեր վանքը և ուրիշներ, հակառակ արքայական հրամանին, այդ պատճառաւ ճարտարապետն ալ պատժուած է։ Պարսպէն դուրս թողուած այդ վանքերը դրացիներուն կողմէն ենթակայ էին աւերումներու և կեղեքումներու։ Սիոնի վանականաց մասին տեղացիներուն բողոքները հասան մինչև արքունիք, Պոլիս։ Սիւլէյման Բ. երեք հրամայական հրատարակեց, վերջինը՝ 2 Յունիս 1551 ին, և հրամայեց որ Սիոնի վանքէն Ֆրանչիսկեանները վտարուին։ Վտարուածներու գլխաւորները նոր վանք մը ունենալու համար, դիմեցին Սուլթանին՝ բայց չյաջողեցան. դիմեցին Պոլսի Հայոց պատրիարքարանը որ անոնց տուաւ յանձնարարական մը՝ որպէս զի Ս. Յակոբի Միաբանութիւնը կա՛մ քաղաքին մէջ և կա՛մ դուրսը վանք մը տրամադրէ անոնց բնակութեան համար։ 1554ին Պոլսի այդ դիմումին վրայ Միաբանութիւնը, Մերտինցի Անդրէաս պատրիարքի օրով, յետ երկար խորհրդակցութեան, քրիստոնէական սիրոյ զգացումէն մղուած որոշեց Ս. Հրեշտակապետի վանքին մէջ առժամաբար հիւրընկալել Սիոնի վանքէն վտարուած Ֆրանչիսկեան կրօնաւորները. և առանց վարձքի անոնց յատկացուցին եկեղեցիին մէջ երկու խորան, եկեղեցիին ետեւի կողմէն երկու ջրհոր և բնակութեան համար երկու բաժին, խանէն մինչև պարտէզ, և հաստատեցին դաշինք մը որուն մէջ յիշած են ինչ ինչ կենցաղական պայմաններ։ Ֆրանչիսկեանք եօթը տարի կը մնան Հրեշտակապետի վանքին մէջ և ապա կը յաջողին վրացիներու Ս. Յովհաննէսի վանքը գնել և հոն բնակիլ։ Մինչև հիմակ ցոյց կը տրուի այն խորանը և աւանդատունը ուր պաշտամունք կը կատարէին անոնք. նոյն իսկ կ'ըսուի թէ եկեղեցիին